

Տապանդ աւոր սուս պարող Քնիփաղէֆի
Օքերա-Քօմիքին մէջ տուած հոյակապ
Գիսթիփալին յայտագրին մէջ հաճոյքավ
տեսանք որ պալէներէն երկուքին ընագրին
շարագրութիւնը յանձնուած էր Պ. Լեւոն
Կիւմիշկէրատանին, որ նաեւ գրած էր՝
յայտագրին իր յառաջապան՝ Քնիփա-
ղէֆի կեանքին ու գործին վրայ քննական
նուրբ տեսութիւն մը: Երկու պալէներու
(Ավիթիներուն ոսիին առկ եւ Պերխոսայի ա-
ւանդապեար) ընազ իրները՝ սիրուն արձակ
քերթուածներ էին: Նոյն երեկոյին հա-
ճոյքին ունեցանք նաեւ ծախաչարելու,
կիւմիշկէրատանի գրական տաղանդին հետ,
հայ վարպետ երաժշափ մը. Ավենդիար-
եանի, սրանչելի արտեսոր. թաթարական
մօթիքներէ քաղուած գունագեղ ու հզօր
նուազաշարքի մը մէջ որ կընկերանար
Թաթարեներու օրով «պալէ» ին:

Հայ մ'աքի եւ արտեստի այս յաջողութեանց շարքը փակենք յիշատակելով նաև Պ. Զատիկի լսանգատեանի Ալճերխոյ շքեղ աթլառը, որու պատրաստաւթիւնը կտապահարա թեան կողմէ իրեն յանձնուած էր Ալճերխոյ հարիւրամեակի հանդիսաւթեանց առթիւ: Հասարը որ կը պարաւնակէ Ալճերխոյ աշխարհագրութեան, ազգագրութեան ու պատմութեան վերաբերեալ էական տեղեկութիւններն ամփոփող ընդարձակ ուսումնասիրութիւն մը եւ Ալճերխոյ բոլոր քարտէներուն հաւաքածուն (հնագոյններէն մինչեւ նորագոյնները), հրատարակուած է գեղարուեստական ընտիր տպագրութեամբ եւ ճշխացուած է արաբական ոճով զարդ անկարներավ զօր յօրինած են Պ. Խանգատեանի աշխատակցաղ հայ զծագիչներ: Ուրախաւթեամբ կիմանանք որ Ֆրանսական Ակադեմիան այդ հաստրին յատկացաւցեր է ժիւլ Քամպանի առաջարկով իր *Prix d'Académie* մրցանակը:

Պ. Ալանգասեան այժմ ձեռնարկած է
աւելի մեծ ծրագրի մը իրականացման,
այն է ովարքաստել հինգ ստուգր համար-
ներու մէջ՝ Ազգերու Ընկերութեան ան-
դամակացող պիտուն երկիրներու աթլամե-

բուհն շարքը, մեծապիր նկարագարդ ցիկլ
հրատարակութեամբ, և այդ ծրագիրը
գործապրելու համար կազմած է Փրանսա-
կան ընկերութիւն մը որուն ինքն իսկ սնօ-
րէնն է։ Առաջին հասողը լոյս կը տեսնէ
ի մօսոց։

Հաճախական իմացանք որ Փարիզի Գեղարվեստից վարժարանի այս տարրան «Համբի երկրորդ մրցանակը» (2me second grand-prix) արուած է նկարչութեան հայուսանողուհի մը՝ Օրիսրդ Իրենէ Գալլապ-ճեանի:

Լ Ր Ա Տ Ո Ւ
ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՒՄԱՆԻՑ ԵՒ ԿՈՎԿԱՆԻՑ

Դերասանունի Օլգա Մայուրեանի Յօհան-
նայ բնմական զործ. յորելեանը.— Թիֆլիսում,
Մայիսի 7ին. Առաւ թավելու թատրոնում տնտեց
գերասանուշի Օլգա Մայուրեանի բնմական զոր-
ծունէութեան Յօհաննայ յորելեանը:

Նախ քան յորելի հանական հանդէսը բեմադրւեց
«Ալիքիանասուից Դէնը» պիթէսը: Բնեմադրութիւնից յետուց տեղի ունեցաւ յորելի հանական հանդէսը, որը բացեց Պ. Պօլասիսնը իր ողջունի ճառով:

Վաստակածի լուսաժողկածի կողմից յորելեարին
աղջունեց Պ. Զիաթարիշվիլին և յայտնեց, որ
լուսաժողկոծի կողեզիան սրոշել է յորելեարին տալ
Վաստակածոր դիրքասանուհու տիտղոս:

Հայաստանի Խուստովկամատի կողմից ողջունեց յոբելեարին պետական թատրոնի դիրիկտոր Պ. Աբրով:

Ողջոյնի խօսքեր ասացին Թիվիլսի Հայ Պետպամացի, Վրաստանի Ալագէծիկ Քրամացի, թուրք Պետպամացի Ներկայացուցիչները։ Վերջու ձ կարգադւեցին շնորհաւորական Հեռազրերը։

Երաժշտագիտ Անոնի Մայիլեանի 25ամ-
եայ յոթելեանը.— Մայիս հին, Բագւուծ, Բա-
նիաթ-Զարէի անւան թուրք պետ, գեկ. թատրոննեմ
Ազրբէջանի Լուսողովոճառի կից Ազգ. Փոքրացառ-

նութիւնների Խորհուրդը աօնեց երաժշագիւածանական-կավարժ-գրականագէտ Ա. Մայլեանի 25ամեայ յորելեանը, որտեղ յորելեարն ստացաւ «Հանրապետութեան վաստակաւոր արտիստ»ի տիտղոսը:

Ա. Մայլեանը գործել է 30 տարի երաժշտական, 26 տարի ճանակարգական և 33 տարի դրական ասպարեզում: Կը տանք նրա կեանքի եւ գործունեութեան պատկերը «Ընահիւառում»:

Ազատ Վշտունու բանաստեղծութիւնները ուղարկն լեզուով. — Ռուսաստանի Պետչրատի հրապարակութեամբ շուտով լոյս է տեսնելու Սզատ Վշտունու բանաստեղծութիւնների ուղարկնելու թարգմանուածուն, որի թարգմանութեանը ճառ, նակար են առաջ գրողներ՝ Ավետչով, Բաղրիցիկի, Կիրստոնի, Ասէեւ, Ռաննիկով և արիշներ: Ժաղավածուի աւաջաբանը զրել է երխտասարդ շնորհչալի քննադատ նորայր Գարադհանը:

Բանավիճ Կոմիտասի արւեստի մասին. — Երեւանում, Գրողների Տանը կայացաւ բանավիճ նիմրւած Կոմիտասի արւեստին:

Բնդգարձակ եւ արժեքաւոր զեկուցում աւեց երաժշտագիւած Ապ. Մելիքեանը: Զեկուցան ուղարկն ասաբ զուտ բանաստիրական բնոյթ էր կրում, իսկ երկրորդ ճառում Մելիքեանը կանգ առաւ առանձնապէս Կոմիտասի զերի եւ արժեքի վրայ ներ երաժշտութեան պատճութեան մէջ:

Զեկուցումից յետոյ տեղի ունեցաւ ճտքերի աշխայդ փախանակութիւն, որին ճանակցեցին Հ. Գիւլիքեսիսկեան, Թամ. Մելիքեան, Ան. Տէր-Գեւոնդեան, Աս. Գեմուրեան, Կարօ Զաբարեան եւ գերասան Զանան:

Գերասան Յովհաննէս Ստեփանեանի մահը. — Ապրիլ 27ին Երեւանու վախճանեց Հայքեմի վաստակաւոր գերասան Յովհաննէս (Օննիկի) Ստեփանեանը: Մնել է նա Լէնինականում (Աբքանդրապոլում) 1871 թին: Աւսել է Հին-Դախիլ ջեւանի ծխական գալոցում: 1891 թին ընդունում է նա Թիֆլիսի գերասանական խուժը եւ շնորհիւ իր ընդունակութեան եւ բարեխիզմ վերաբերմոնքի շուտով առաջ է քաշւում: Այնուշեաւ իբրեւ բեմական աչքի ընկնող ում Աբքանուշի, Ե. Պետրոսեանի եւ Աբէլեանի Հետ կանոնադր կազմակերպուած խուժութեան վրա մասնակիւ կազմակերպուած շըջում է Կոմիտասի կեցրոնական քաղաքները, Անդրկաստեան երկիրը, ապա Ռու-

սաստան, Պարսկաստան, Ճաճկաստան, Բուլղարիա¹ Ռումիանիա, Եգիպտոս եւալին:

Հայաստանի խորհրդադատութիւն յեառ Մակեանեանն աշխատել է Երեւանի պետական խրճիւմ: 1923 թին Հայաստանի Լուս ժողկութափի և Արշակութիւնների կուլտ. բաժնի նախաձեռնութեամբ տօնեց նրա բեմական գործունեութեան 30ամեայ յորելեանը:

Ստեփանեանը սիրուած եւ յարդւուծ էր իր զե-



ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ

րաստ ընկերներից, նու որագաց Էր բոլորի ճօտ եւ հեռու էր զերասանական ինտրիկներից:

Նրա ճահճան առ թիւ ընտրւեց թաղան յանձ նամողով նախազահութեամբ Կերպչի նախադաշտ Պ. Սարգիս Մելիքսէթեանի:

Ապրիլի 30ին, Չորեքշաբիլի, առաւօս հան ժամը 14ին ճարձինը հիւանդանոցից, աեղափոխուեց պետական թատրոն, ուր ժամը 11-4-ը զագաղի վրայ պահուաց պահակ կանդնեցին զեղարւեստի աշխատաւուները: 3 ժ. 30 տեղի ունեցաւ քաղաքացիական հակեհանգիստ: Ժամը ուղիղ 4ին տեղի ունեցաւ թաղումը Երեւանի նոր զերեզմանատանը:

«Անիի ցուցանանդէսաը Լինինգրադում. — Ինչպէս յայտնել էինք «Ընահիւառում, ծրագրուած է կազմակերպել Լէնինգրադում Հայաստանի Պետ. Թանգարանի, Նիւթական Կուլտուրայի Պատմութեան ձևամրանի եւ Երմիտաժի արեւելեան բաժնի մի ա-

ցած ուժերով՝ Անիի հնութիւնների ցուցահանդես, օպուելով այն հանգամանքից, որ Լէնինգրազումն են Անիի պեղումների նախաձեռնողն ու դեկապարը ակադեմիկ Ն. Մառը եւ Պրոֆ. Հ. Օբրելին։ Այդ նպատակով Երեւանից տեղափոխւած է Պետ. Թանգարանի ունեցած Անիի հնութիւնների աճրով ջողավածուն։ Երբ լրացուցիչ ուղարկել են նաև ճարտարապետ Ն. Բունիաթեանի Անիում կատարած գծադրութերը։ Բանիաթեանի պահպանած գծադրութերն ստանում են կրկնակի կարեւորութիւն այն պատճառով, որ Անիի լուսանկարների նեղաւախվերի, գծադրութերի, պեղման օրացիւների եւ այլ նիւթերի ժողովածուն, մի աճրով ջ վագոն, որ քաղաքացիական կումիների սկզբին ուղարկել է Լէնինգրադ, ճամբին անշատացել է։

Վերոյիշեալ նիւթերին պէտք է ստեղանան Երմիտաժում գտնուած խեցիները եւ որմեանկարները։ Ցուցահանդեսից յետոյ աճրով ջացած ժողավածուն պիտի ուղարկի Երեւան՝ Պետ. Թանգարանում ճշշտապէս պահւելու համար։ Ցուցահանդեսը բացւում է այս աճսի կեսերին եւ կը տեւի երկու աճին։

Գեղաշխի կերպարւեստի սէկցիայի ցուցահանդեսը։ — Երեւանում պէտ. թարանի շէնքում բացւեց Գեղաշխի կերպարւեստի սէկցիայի ցուցահանդեսը, որին մասնակցում են Հայաստանի Ցեղափոխութեան Արևստագէտների Մխոթիւնը, երիտ. սէկցիան, Հայաստանի կերպարւեստագէտների ընկերութիւնը, գեղարտեխնիկումի արագրական բաժնընը եւ անհատ արևստագէտներ։

Հինգ դաշիներում տեղաւորուած են նմուշներ գեղանկարչութիւնից, քանդակագործութիւնից, գրաֆիկայից, ճարտարապետ պրոեկտներից, փայտածական ու մետաղածական նմուշներ։

Վ. Աստրեանի «Զրահագնացքը»։ — Երեւանի Պետրառը լոյս ընծայեց Վ. Աստրեանի «Զրահագնացքը», որի նիւթը, մերցւած Խորշ. Հայաստանի կեանքից, ոնի բաւական յաջող նիւրագրութիւններ, տիսեր եւ պատկեներ։

Երաժշտական երատարակչութիւն։ — Թիֆլիսի Լուսամնին կից կաղմակերպաւած է Երաժշտական հրատարակչութիւն, Ընտրուած է մի յատուկ խճագրական կոլլեգիա, որի կաղմի մէջ մասնում են, երաժշտաներ Երմէն Ցիցլանեան, Մարտիրոս Մաղմանեան, Արշալոյս Այվաղեան եւ Աւճր-Շուտ, Կոլեգիան ծօտ օրերս հրատարակելու է մի շաբա-

մանկական երգեր, որի համար իր արածազրութեան տակ ունի սրոշ գումար։

«Լիրիկա»։ — Վրաստանի Պրոլետ Գրողների Ասոցիացիայի հայկական սէկցիայի հրատարակութեանը լոյս անուանուարդ շնորհալի պրոլետանաստեղծ Առորէն Ազարաբի «Լիրիկա» բանաստեղծութիւնների գրքով։

Կոյր երաժշտագէտ Խաչիկ Խաչիկեանի համերգը։ — Հայ երիտասարդ կոճապղիտորների բնագաւառում աւելանում է մի նոր համեստ ուժ եւս, զա կոյր երաժիշտ Խաչիկ Խաչիկեանն է, որի համերգը կայացաւ Ցունիս հին Թիֆլիսի պետական կօնսերվատորիայի դաշինում։ Մրագիրը կաղմած էր վերջին տարւայ նրա ստեղծադործութիւններից։ Նրա «Երեւելեան նոկախւնը», «Սոյոց Պրելիւզը» եւ այլ աշխատութիւններն ապացոյց են նրա խոշոր բնածին երաժշտական ընդունակութեան։

ԹՂ.ԹՂԱՒՅԻՑ

Վ Ր Ի Պ Ո Կ

Անահիս, թիւ 6, Կամբը ուսումնասիրութեան մէջ՝ էջ 24, 4րդ տող (վարէն) Ա. սիւնակ, նախկին, ուղղել նախկուր. էջ 26, տող 18, Բ. սիւնակ, Արդէն, ուղղել Արդի. էջ 27, Բ. սիւնակ, ծահօթազրութեան մէջ, Le Sivaut, ուղղել Le Sayant. էջ 29, Բ. սիւնակ, տող 14, կամբն խիկ, ուղղել կեանին խիկ. էջ 32, Բ. սիւնակ, տող 18, ծահօթազրին. Վենի նիւրի ըուրջ, խիկ... ուղղել ծահօթազրին։ Վենի նիւրի ըուրջ, խիկ...

Ե. Մանուկեանի նուիրուած յօդուածին. մէջ, էջ 4, Ա. սիւնակ, 1827ին, ուղղել 1927ին։

Ա. Մազղեանի յօդուածին մէջ, պատկերները թուազրուած են 1, 2, 3, ուղղել 3, 4, 5, եւայլն։

LE GÉRANT : ATOG GUÉVREK

IMPRIMERIE TURABIAN

227. BOULEVARD RASPAIL

PARIS